ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> հունվարի 2021թ. ՆՄՈ/213/2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՆՄՈ/64-2021 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով 2021 թվականի մայիսի 6-ի N122435 գրությամբ, էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով առցանց եղանակով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան Հ. Բաբայանի կողմից ներկայացված Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի մայիսի 3-ի <<Բողոքը քննության առնելու մասին>> թիվ ԱՐԴ1/0007/21 քրեական գործով կայացված որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի դատախազի 2021 թվականի հունիսի 24-ի N60/5994-21 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում քննվող թիվ 57853919 քրեական գործով մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունները կասեցնելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ որոշումը.

որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 26-ի <<Ծիածանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առեվտրային կազմակերպության տնօրեն Գոհար Գազազյանի պաշտոնավարությունը ժամանավորապես դադարեցնելու մասին>> ՆՄՈ/64-2021 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**